ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/8127/02/24

# ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

9 հոկտեմբերի 2024թ        ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ՍԵՅՍՄԾԻՆ» ՍՊ ընկերությունը և «Ծին նախագիծ» ՍՊ ընկերությունն ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի՝ «ՍԵՅՍՄԾԻՆ» և «ԾԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին 20.09.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

## ՊԱՐԶԵՑԻ

«ՍԵՅՍՄԾԻՆ» ՍՊ ընկերության և «Ծին նախագիծ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2024թ. հոկտեմբերի 2-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի՝ «ՍԵՅՍՄԾԻՆ» և «ԾԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին 20.09.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Էլեկտրոնային եղանակով վարվող գործը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2024թ. հոկտեմբերի 3-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2024թ. հոկտեմբերի 4-ին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և

122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊ ընկերությունը և «Շին նախագիծ» ՍՊ ընկերությունն ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի՝ «ՍԵՅՍՄՇԻՆ» և «ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին 20.09.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
Թիվ ԵԴ2/8127/02/24 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. նոյեմբերի 11-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան**

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2024.10.09 19:20:01 AMT

---

*Տվյալ փայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*